ՀՏԴ 325 /479.243/ Քաղաքականություն

ԼՂՀ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉՆԵՐ

Ալվարդ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Բանալի բառեր՝ *ազգային անվտանգություն, պաշտպանվածություն, թուրքական սպառնալիք, արտաքին քաղաքականություն, աշխարհաքաղաքականություն, ռազմաքաղաքական, պետական համակարգ, հայեցակարգ, դոկտրինա, աշխարհասփյուռ հայություն, գոյապահպանություն, կենսական շահեր, սփյուռք:*

Ключевые слова: *национальная безопасность, безопасность, турецкая угроза, внешняя политика, геополитика, военно-политический, государственная система, концепция, доктрина, армяне всего мира, выживание, жизненные интересы, диаспора.*

***Key words**: national security, security, Turkish threat, foreign policy, geopolitics, military and political, state system, concept, doctrine, Arminians around the world, survival, vital interests, diaspora.*

Некоторые компоненты безопасности НКР

А. Абрамян

В статье автор представил составные части внутренней и внешней безопасности НКР, уделив особое внимание задачам защиты от внешних угроз, политическому обоснованию по укреплению основ экономики и социальной стабильности, сближению слоев общества, предотвращению оттока рабочей силы из республики. Правильное решение данных проблем будет способствовать развитию в социально-экономической и духовно-культурной областей, предотвращению угроз со стороны противника, укреплению суверенитета государства.

Some Components of the Security of NKR

A. Abrahamyan

The auther presented in the paper the constituent parts of internal and external security of the NKR, paying special attention to the problems of protection from external threats, political justification for strengthening the bases of economic and social stability of society, prevention of the outflow of workfors from the republic.

The proper solution to these problems will contribute to the development of socio-economic as well as spiritual and cultural spheres, preclusion of the enemy threats, strengthining the sovereignty of the state.

Հոդվածում հեղինակը ներկայացրել է ԼՂՀ ներքին և արտաքին անվտանգության բաղադրիչների համակարգը՝ առանձնացնելով հատկապես պաշտպանության, տնտեսական ու սոցիալական գործոնների կայունացման, հասարակության սոցիալական շերտերի մերձեցման, երիտասարդ աշխատուժի արտահոսքի կանխման խնդիրները: Դրանց իրականացումը կապահովի հասարակության սոցիալ-տնտեսական և մշակութահոգեբանական զարգացումը, կփարատի հակառակորդի սպառնալիքը, կամրապնդի երկրի ու պետության սուվերենությունը:

Արդի աշխարհաքաղաքականության հորձանուտում ընդգրկված գերհզոր ուժերի խմբավորումները ձգտում են նյութական և ինֆորմացիոն հոսքերով տիրապետություն սահմանել ռազմավարական կարևորագույն նշնակություն ունեցող տարածաշրջանային հանգույցների վրա: Այդպիսի հանգույցներից է Հարավային Կովկասը, որտեղ բախվում են գերհզոր ուժերի շահերը: Իսկ քանի որ Հարավային Կովկասի տարածքում միանշանակ բացակայում է ճանաչված և չճանաչված պետությունների սոցիալ-տնտեսական և քաղաքական ինտեգրացված ռազմավարությունը, ապա բնականաբար չեն կարող համընկնել նաև այդ տարածաշրջանի պետությունների ազգային շահերն ու ազգային անվտանգության կառուցվածքային համակարգերի մոդելները: ԼՂՀ-ի ներքին և արտաքին անվտանգության կոնցեպցիան արտահայտում է հասարակության կյանքի բոլոր ասպարեզներում յուրաքանչյուր անհատի, ողջ հասարակության և պետության անվտանգության ապահովումը ներքին և արտաքին խաթարումներից և սպառնալիքներից: Ներքին և արտաքին անվտանգության ապահովման մասին սկզբունքների համակարգը շարադրված է ԼՂՀ սահմանադրության <<Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները, ազատություններն ու

պարտականությունները>> բաժնում: Այստեղ հիմնավորվում է քաղաքացու, հասարակության և պետության շահերի միասնությունը՝ տնտեսական, սոցիալ-քաղաքական, երկրի պաշտպանության, մշակույթի զարգացման, բնապահպանության ասպարեզներում: Օրենքով սահմանված են նաև քաղաքացու, հասարակական կառույցների և պետության պարտականությունները: Սահմանվող իրավունքներն ու պարտականությունները մշտական բնույթ ունեն և նպատակաուղղված են ռազմավարական խնդիրների իրականացմանը: Սահմանադրական դրույթները վերահսկվում և իրականացվում են պետության պաշտպանական քաղաքականությամբ:[1] ԼՂՀ-ում մշակվող և իրականացվող քաղաքականության գերխնդիրը նպատակաուղղված է երկրի պաշտպանությանը՝ մշտապես առկա արտաքին վտանգից: Այն ուղղակի կարելի է անվանել պաշտպանության քաղաքականություն: Իր հռչակման օրվանից սկսած երկրի իշխանությունները ձեռնարկել և վարում են ռազմական ուժերի կատարելագործման և տարածաշրջանում կայացած բանակի ստեղծման քաղաքականություն: Ազգային անվտանգության հիմնախնդիրը ներառում է նաև տնտեսական, սոցիալական և հոգևոր ասպարեզներում դրսևորվող հիմնահարցերի լուծումը: Տնտեսական կյանքում առանցքային հիմնահարցը տնտեսության դինամիկ զարգացման ապահովումն է: Սոցիալական ասպարեզի հիմնահարցեր են համարվում հասարակության մեջ սոցիալական հանրույթների համերաշխության և միատարրության ձևավորումն ու կենսամակարդակի աստիճանական մերձեցումը: Հոգևոր ասպարեզում գերակա հիմնահարց է համարվում ավանդաբար փոխանցված բարոյական նորմերի և ազգային մշակույթի արժեքների պահպանումը: Միջազգային հարաբերությունների համակարգում ԼՂՀ-ի ռազմավարական հիմնախնդիրներ են հանդիսանում պետությունների մեծ ընտանիքում հավասարազոր իրավունքների վաստակումը և համակողմանի ու ակտիվ ինտեգրումը ՀՀ-ի հետ:

ԼՂՀ-ի արտաքին անվտանգության հիմնախնդիրը անմիջականորեն առնչվում է հայ ժողովրդի նկատմամբ թուրք ազգի վաղեմի և ներկա ազգատյաց ոգու դրսևորման և խորհրդային տոտալիտար հասարակարգի մեղքով Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի նորաթուխ սոցիալիստական հանրապետությանը բռնակցելու պատմական գործընթացների հետ: ԼՂՀ-ի արտաքին անվտանգության քաղաքականության մեջ առանձնահատուկ նշանակություն են ստանում ռազմական ուժերի զինվածության բալանսում մշտապես պահպանելու հավասարակշռությունը Ադրբեջանի կողմից մշտապես գործադրվող ինֆորմացիոն պատերազմին դիմակայելու, հակառակորդի ձեռնարկած պրովոկացիաներին և ագրեսիվ գործողություններին պատասխանելու, միջազգային ատյաններում ադրբեջանական և թուրքական դիվանագիտության ձեռնարկումներին հակահարված տալու խնդիրները: ԼՂՀ-ի արտաքին անվտանգության քաղաքականության մեջ կարևորվում են նաև հակառակորդի և այլ ուժերի կողմից ձեռնարկած մրցահրավերներին դիմակայելու խնդիրները: Այդպիսի խնդիրներից են հարևաններ Թուրքիայի և Ադրբեջանի կողմից տրանսպորտային շրջափակումները, տարածաշրջանում տնտեսական ինտեգրացման գործընթացին խոչընդոտումը, իսլամական գործոնի ակտիվացումը հարևան երկրներում, Ադրբեջանի այսպես կոչված տերիտորիալ պահանջատիրությունը, Մերձավոր Արևելքի երկրներում ակտիվացած ահաբեկչական ընդարումները, սահմանային գոտիներում Ադրբեջանի ռազմական ուժերի սիստեմատիկ զինավարժությունները, ԵԱՀԿ-ի վարկանիշի քննադատությունը և խնդիրը՝ ՄԱԿ-ի շրջանակները տեղափոխելու Ադրբեջանի նկրտումները:

Նշելով ԼՂՀ-ի անվտանգության քաղաքականության ասպարեզում ծագող ներքին և արտաքին բնույթի հիմնախնդիրները, գտնում ենք, որ դրանցում յուրաքանչյուր կոնկրետ ժամանակահատվածում համակարգման միջոցով առանձնացվում են գերհրատապները, ելնելով երկրի կյանքում ստեղծված ներքին և արտաքին իրադրության կացությունից: Կասկած լինել չի կարող, որ ԼՂՀ-ի հասարակության և յուրաքանչյուր անհատի համար բոլոր դեպքերում

[1] Տես, ԼՂՀ սահմանադրություն, Ստեփանակերտ, 2006, էջ. 9-21:

գերակայող խնդիրը ռազմական պաշտպանությունն է: ԼՂՀ-ին սպառնացող ռազմական վտանգի հիմնական հարուցիչը ադրբեջանական իշխանությունների երդվյալ հայատյաց քաղաքականության շարունակության դրսևորումն է: Այդ քաղաքականության նպատակային խնդիրներ են հանդիսանում ղարաբաղահայության վերացումն ու պատմական Հայաստանի արևելյան տարածքների բռնագրավումը: Ռազմական տեխնիկայի և մարդկային քանակական ուժի առումներով Ադրբեջանի և ԼՂՀ-ի ունեցած պոտենցիալի համաչափության մասին խոսք լինել չի կարող: Ադրբեջանի ուժերը իրենց քանակով բազում անգամ գերազանցում են ԼՂՀ-ի ուժերին:[1] Սակայն առկա են նաև իրական այլ գործոններ, որոնք, ըստ երևույթին հաշվի են առնվում նաև ադրբեջանական իշխանությունների կողմից: Թվարկենք այդ գործոններից մի քանիսը՝ ա) եթե պատերազմական գործողությունների վերսկսման դեպքում ադրբեջանական կողմի համար նախկինում իր իրավասության տակ գտնվող հայկական տարածքների ետգրավման խնդիրն է դրվում, ապա ղարաբաղյան կողմի համար իր ժողովրդի և հայրենի հողի պահպանության խնդիրն է դրված: Ղարաբաղյան հողում նոր պատերազմի ծագման դեպքում ադրբեջանական ազգի կորստի սպառնալիք լինել չի կարող: Մինչդեռ ԼՂՀ-ի համար վտանգվում է արցախահայության և նախորդ սերունդների կողմից բազում արհավիրքներից պաշտպանված ու պահպանված հայրենիքի գոյությունը: բ) ԼՂՀ-ի ռազմական պաշտպանության որոշիչ գործոններից է Հայաստանի Հանրապետության կողմից Արցախի բնակչության անվտանգության երաշխավորության ստանձնումը: Հայաստանի Հանրապետության ռազմական պաշտպանության դոկտրինայի հիմքում դրվում է հանրապետության զինված ուժերի պաշտպանողականության սկզբունքը:[2] ՀՀ-ի դեմ ուղղված անմիջական սպառնալիք է համարվում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի նկատմամբ Ադրբեջանի վարած ռազմատենչ քաղաքականությունը… Ուստի Հայաստանի զինված ուժերի խնդիրն է հանդիսանում նաև ԼՂՀ-ի բնակչության ֆիզիկական անվտանգության ապահովումը: [3] գ) ԼՂՀ-ի ռազմական անվտանգության ապահովումը կարևորվում են նաև Ռուսաստանի Դաշնության հետ Հայաստանի հանրապետության կապերը պաշտպանական և ռազմատեխնիկական բնագավառներում, ինչպես նաև Հայաստանի անդամակցությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը:

ԼՂՀ-ի արտաքին և ներքին անվտանգության համակարգերը կազմում են փոխկապակցված գործոնների միասնական ամբողջություն: Այդ միասնական համակարգի բաղադրիչները իրենց բնույթով կարող են լինել ռազմավարական և ընթացիկ: Արդի ժամանակահատվածում առանձնահատուկ նշանակություն է ստանում հասարակության ազգագրական ընթացակարգը: Ազգաբնակչության թվաքանակի դանդաղ աճը և երիտասարդ աշխատուժի մի մասի արտահոսքը ներքին և արտաքին անվտանգության ամենացավոտ խնդիրներից են: Վերջին տարիներին իշխանությունները ձեռնարկել են որոշ միջոցառումներ երիտասարդության արտահոսքի կանխման, գյուղերի սոցիալական խնդիրների լուծման, ճանապարհաշինության, բազմանդամ ընտանիքների նյութական աջակցության և այլ հարցերում: Սակայն ինչպես ասում են <<սայլը դժվար է տեղից շարժվում>>: Ազգաբնակչության աճի դանդաղ տեմպերը և արտահոսքը միանշանակ բացասաբար են անդրադառնում ընդհանրական զարգացմանը, սոցիալական ոլորտի և ամենակարևորը՝ պաշտպանության կազմակերպման խնդրի վրա: Ստորև ներկայացվող փոքր աղյուսակը հուշում է, թե ազգաբնակչության աճի ինչպիսի ընթացք և նախազորակոչային երիտասարդության ինչպիսի պահեստային ֆոնդ կարող է ունենալ ԼՂՀ-ն 2016-2018 թվականներին.

[1] Ադրբեջանի, Հայաստանի և ԼՂՀ-ի ռազմական ուժերի ցուցանիշները շարադրական են Կովկասի ինստիտուտի 2011թ. հ-3 վերլուծականում:
[2] Տես, http://www.mil.am,էջ 9:
[3] Տես. Նույն տեղը, էջ 14:

ԼՂՀ բնակչության աճի տվյալները 2001-2003թթ.[1]

	2001	2002	2003
ամբողջ բնակչության (հաշվարկը)	144.7	145.0	145.5
ծնվածների թիվը ընդամենը	2306	2190	2058
տղաներ	1210	1149	1152

2003 թվականի տվյալներով ԼՂՀ-ի քաղաքային բնակչության թիվը կազմում էր 77.5 հազար, գյուղական բնակչության թիվը՝ 67.5 հազար:[2]Նույն թվականին արդյունաբերության բնագավառում աշխատողների թիվը կազմում էր 3440 մարդ, գյուղատնտեսության բնագավառում աշխատողների թիվը կազմում էր 25340 մարդ:[3]

Կենսաթոշակառուների ընդհանուր թիվը կազմում էր 36300մարդ:[4] Այսինքն կենսաթոշակառուների թիվը 7560 հոգով գերազանցում էր արդյունաբերության և գյուղատնտեսության բնագավառներում աշխատողների ընդհանուր թվաքանակից: Հետևաբար բնակչության աճի և զբաղվածության մասին բերված տվյալները վկայում են երկրի բնակչության ծերացման մասին: Հիմնական պատճառը աշխատունակ, հատկապես երիտասարդ տարիքի բանկչության արտահոսքն է, որի կանխումը անվտանգության ապահովման գերակա խնդիրներից մեկն է: Բնակչության արտահոսքի հիմնական հարուցիչը արտերկրում աշխատանքի որոնումն է: Չնայած ցավալի է, բայց նաև անժխտելի իրականություն է այն, որ այսօրվա Լեռնային Ղարաբաղը փաստացի իր ունեցած հնարավոր չափերով դարձել է Ռուսաստանին որակյալ աշխատուժ տրամադրող երկիր:

Բազում անգամ արդեն ասվել ու գրվել է, որ անցյալ դարի 80-ական թվականների վերջին տարիներին Ստեփանակերտի Ազատության հրապարակը դարձել է այն ասպարեզը, որտեղ ձևավորվել են Լեռնային Ղարաբաղի իշխանական էլիտար խմբի և հասարակության համագործակցությունն ու հավատը միմյանց նկատմամբ: Մարդիկ համոզված էին, որ ձևավորվել է հասարակության սոցիալական այնպիսի միատարրություն, որտեղ վերջապես իրականություն կդառնա Ֆրանսիական մեծ հեղափոխության կոչերը Ղարաբաղում: Սակայն պատմության վկայությամբ բոլոր ազատագրական և հեղափոխական շարժումներից հետո ձեռնարկվող բարեփոխումների և տնտեսական փոխակերպումների արդյունքում տեղի է ունենում նաև հասարակության սոցիալական կառուցվածքի նոր փոխակերպում: Այդպիսի գործընթացից անմասն չմնաց նաև Լեռնային Ղարաբաղի հասարակության շարժումը հարաբերականորեն ավարտվելուց հետո:

Տնտեսական բարեփոխումների նոր ռազմավարության անվան տակ ԼՂՀ-ի իշխանությունները սեփական հայեցողությամբ, առանց հասարակության ավանդական կամային և հոգևոր արժեքների հաշվառման, ձեռնարկեցին տնտեսական շուկայական հարաբերությունների հիման վրա նոր համակարգի կառուցումը: Ռեսուրսները հայտնվեցին փոքր խումբ նորաթուխ ձեռնարկատերերի ձեռքում: Համայնական հասարակարգում ձևավորված անհատի համար խորթ էր հրաշքով կայացած մասնավոր սեփականատիրոջը ծառայելու հոգեբանության ընկալումը: Ձեռնարկատերերը անշարժ գույքի և ռեսուրսների մի մասը վերավաճառեցին կամ վերակառուցեցին իրենց բաժին հասած օբյեկտները՝ ընդլայնելով խանութների և ռեստորանների ցանցը: Արտադրություն կոչվող կատեգորիան միանշանակ հայտնվեց ստվերի տակ: Գործազրկությունն ու հասարակության սոցիալական կարիքների նկատմամբ ցուցաբերվող անորոշությունը անցումային փուլում դարձան հասարակության

[1] Տես Լեռնային Ղարաբաղը թվերով,Ստեփանակերտ 2004, էջ 27
[2] Նույն տեղը, էջ 18
[3] Նույն տեղը, էջ 22
[4] Նույն տեղը էջ 27

ներքին կայունացման համար իրական վտանգներ: Դա նպաստեց հասարակության սոցիալական նոր կառուցվածքի ձևափոխմանը: Առաջացան գործազուրկների, աղքատների, չքավորների, հաշմանդամների, երկրապահների, վարձու աշխատողների, մուրացողների խմբեր: Անկատար մնացին կառավարական որոշումների այն կետերը, որոնք խնդիր էին դնում երկրում զարգացնել մանր և միջին ձեռնարկատիրական համակարգը: Բնական ու սովորական երևույթ դարձավ արտագնացությունը: Մեր կարծիքով երիտասարդ աշխատուժի արտահոսքի հիմնական պատճառը տնտեսական կյանքում հիմնավորված մենաշինորային կարգավիճակն է: ԼՂՀ-ում չափազանց դանդաղ տեմպերով է ընթանում տնտեսության ազատականացման իրավական ինոգիտացիոնալ համակարգը: Նկատելի չէ պետության ակտիվ դերակատարությունը միջին և մանր ձեռնարկատիրության ծավալման գործում: Աշխատանքի տեղաբաշխման և օգտագործման, աշխատանքի կազմակերպման և վարձատրության, արտադրության և շինարարության գործընթացում մարդու իրավունքների հայեցակարգի պաշտպանության խնդիրները հիմնականում լուծվում են գործատուի սուբյեկտիվ կամքով՝ սուբյեկտիվ շահերից ելնելով, այսինքն նյութական և ֆինանսական ռեսուրսների տերերի շահերի օգտին: Ավելի ստույգ գործատուի և աշխատողի հարաբերությունների կարգավորման համար պարզապես չի գործում օրենսդրությունը: Գործարքը ստեղծվում է երկու անձերի միջև, լավագույն դեպքում պայմանագրային փաստաթղթերով, որը իրականում ձևական բնույթ է կրում: Ստեղծված հասարակական կազմակերպությունները նույնպես նշված հարաբերությունների կարգավորման գործում որևէ ազդեցություն ունենալ չեն կարող, քանի որ այդ կազմակերպությունները փաստորեն գործում են իրենք իրենց համար:

Անվտանգության խնդիրը առնչվում է համամարդկային չարիք համարվող կոռուպցիոն երևույթի հետ: Աշխարհում չկա իշխանություն, որը մտահոգություն չհամարի կոռուպցիայի սպառնացող վտանգը: Անշուշտ, կոռուպցիան ունի իր սոցիալական արմատներն ու դրսևորման բազմաբնույթ եղանակները: Կոռուպցիան հատուկ է հասարակական բոլոր հաստատություններին: Հասարակագիտության մեջ հիմնավորվող կարծիքն այն է, որ կոռուպցիան անբաժան է հասարակության կյանքից և առայսօր չի գտնված նրա վերացման պատճառը: Այսքանով հանդերձ, կոռուպցիան ավելի ցայտուն կայանում է անցումային փուլում գտնվող երկրներում, որտեղ օրենսդրական համակարգը և ինքնակառավարման հայեցակարգը գտնվում են կատարելագործման գործընթացում: Ի դեպ, ինքնակառավարումը ավելի հնարավոր պայմաններ է ստեղծում գործարարների և պետության վարչական վերահսկող կառույցներում ղեկավար դիրքեր զբաղեցնող սուբյեկտների միջև կայացող <<համաձայնությունների>> ու վիճելի հարցերի լուծման համար: ԼՂՀ-ի իշխանական համակարգում համարյա չի խոսվում կոռուպցիոն լուրջ երևույթների մասին, եթե չհաշվենք առիթներով կատարվող որոշ քննադատական դիտողությունները այս կամ այն ասպարեզում եղած ստվերոտ երևույթների մասին: Բայց դրա հետ մեկտեղ առկա են մարդկանց դժգոհությունները կադրերի ընտրության, սեփականաշնորհման, բանկային վարկերի տրամադրման ժամանակ մարման տոկոսադրույքների սահմանման, հարկային օրենսդրության կիրառման և այլ ասպարեզներում:

Անվտանգության ապահովումը վերահսկող հաստատությունները վերջին հաշվով գործուն դեր կարող են կատարել այն դեպքում, եթե աշխատում են միասնաբար և հովանավորվում ու աջակցվում են իշխանության կողմից: Փոխշահավետ և միմյանցից անկախ գործող հաստատությունների գործունեությունը կարող է միայն խորացնել հասարակության սոցիալական դիֆերենցացումը, որը կարող է ներքին բախումների նախադրյալ դառնալ:

Сведения об авторе:
Ալվարդ Աբրահամյան՝ ԱրՊՀ փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս
E-mail: alvard.abrahamyan@rambler.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ա.Փ.Ենգոյանը: